# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ

●

# CONSTITUTION OF THE ARMENIAN CHURCH JUNIOR LEAGUE

Ի Նիւ Եորք
1944

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԱՄԵՐԻԿԱՅԻ

Ի Նիւ Եորք
1944

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

●

## ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

*Սոյն կազմակերպութեան անունն է Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւն։*

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

### Նպատակներ եւ Ուղղութիւն

Հատուած 1. *Միութեանս նպատակներն են.—*

*Ա.— Սորվիլ, գործադրել եւ տարածել Քրիստոսի կեանքն ու վարդապետութիւնը, համաձայն Հայց. Եկեղեցւոյ ուղղութեան։*

*Բ.— Քաջալերել կրօնական կեանք եւ ներշնչել ճշմարիտ գնահատութիւն Հայց. Եկեղեցւոյ հոգեկան եւ մշակութային արժէքներու։*

*Գ.— Միութեան անդամներուն մէջ՝ տարածել քրիստոնէական սկզբունքները եւ զարկ տալ փոխադարձ սիրոյ եւ գործակցութեան ոգիի ծաւալման։*

Սորվիլ Հայց. Եկեղեցւոյ ծէսերը, խորհուրդներն ու պատմութիւնը:

Գ.— Ծառայել Հայց Եկեղեցւոյ եւ գործակցիլ տեղական Հոգաբարձութեանց աշխատանքներուն: Աջակցիլ եկեղեցւոյ ելեւմուտքին՝ տարեկան որոշ գումարով մը:

Հատուած 2. Միութեան Ուղղութիւնն է.—

Ա.— Հետեւիլ Հայց. Եկեղեցւոյ Օրինաց, դաւանութեան, ծիսակատարութեան եւ կարգապահութեան:

Բ.— Ներդաշնակօրէն գործել Ամերիկահայոց Հայց. Եկեղեցւոյ սահմանադրութեան ու կանոնադրութեան, եւ տեղական հոգաբարձութեանց հետ:

Գ.— Գործել տեղական հովուի եւ հոգաբարձութեան իրաւասութեան ներքեւ, հաստատութեամբ Ամերիկահայոց Առաջնորդարանի:

## ՅՕԴՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

### Անդամակցութիւն եւ Տուրքեր

Հատ. 1— Միութեանս կ՚անդամակցին արական եւ իգական սեռէ բոլոր անոնք՝ որոնք լրացուցած են իրենց    տարիքը, եւ ընդունած են Հայց. Եկեղեցւոյ վարդապետութիւնը, օրէնքներն ու արարողութիւնները:



Հատ. 2— Անդամակցութեան թեկնածուները վաղօրօք կը վճարեն իրենց անդամատուրքը, կը կատարեն գրաւոր դիմում եւ կը ստորագրեն հետեւեալ ուխտը.—

«Ես այսու կ՚արձանագրուիմ որպէս անդամ Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան. եւ հանդիսաւորապէս կ՚ուխտեմ պաշտպանել Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան կանոնադրութիւնը, եւ իմ կարողութեան լաւագոյն չափով, ու հաւատարմութեամբ գործադրել անոր նպատակները ուղղութիւնն ու որոշումները»:

Հատ. 3— Միութեան տարեկան անդամատուրքն է 2 տոլար: Վճարման ժամանակն ու եղանակը կ՚որոշէ Մասնաճիւղի անդամական ժողովը:

Հատ. 4— Տարեշրջանը կը սկսի Յունուար ամիսէն:

## ՅՕԴՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

### Մասնաճիւղեր

Հատ. 1— Մասնաճիւղերու Կազմութիւն. Անդամակցութեան պայմանները լրացնող տասը կամ աւելի անձինք կրնան կազմել Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան մասնաճիւղ մը, տեղական եկեղեցւոյ հովուի եւ հոգաբարձութեան հաստատութեամբ տալով տեղեկութիւն Առաջնորդարանին:

Հատ. 2— Գործադիր Մարմին, Վարչութիւն.

*Ա— Իւրաքանչիւր Մասնաճիւղ, Դեկտեմբերի ընթացքին, մեծամասնութեան եւ գաղտնի քուէով կ'ընտրէ Ատենապետ, փոխ Ատենապետ, Ատենադպիր եւ Թղթակցող Ատենադպիրներ, Գանձապահ եւ չորս Խորհրդականներ, որոնց բոլորը հաւաքաբար կը կազմեն Վարչութիւնը: Վարչութեան պաշտօնավարութեան շրջանը մէկ տարի է, սկսած Յունուար ամիսէն: Շրջանի ընթացքին թափուր մնացած պաշտօնները Վարչութիւնը կ'ամբողջացնէ մեծամասնութեան քուէով:*

*Բ— Վարչութիւնը ժողով կը գումարէ ամիսը մէկ անգամ եւ լիազօրութիւն ունի վարելու մասնաճիւղի ընդհանուր գործերը, անդամական ժողովի որոշումներու համաձայն:*

*Գ. Վարչութեան պարտականութեանց մաս կը կազմեն, աւելցնել Միութեան անդամակցողներու քանակը: Ստանալ անդամակցութեան խնդրագրեր եւ ներկայացնել անդամական ժողովին, որ կ'ընդունի կամ կը մերժէ:*

*Դ— Պատրաստել մասնաճիւղի ամբողջ տարեշրջանի համար ընկերային, կրօնական, դաստիարակչական եւ մշակութային գործունէութեանց ծրագիր եւ վարել անոնց գործադրութիւնը:*



Հատ. 3— Ընտրութիւններ.

*Ա— Վարչութեան բոլոր անդամներու ընտրութիւնները կը կատարուին գաղտնի քուէով եւ տրաատուներու անձամբ քուէարկութեամբ:*

*Բ— Իրենց անդամատուրքը վճարող անդամները միայն կրնան ընտրող կամ ընտրելի ըլլալ:*

*Գ— Պաշտօնի ընտրութեան թեկնածու մը պէտք է որ առնուազն տարի մը Միութեան անդամ եղած ըլլայ:*

*Դ— Բոլոր ընտրութիւնները կը կատարուին մեծամասնութեան քուէով:*

Հատ. 4— Անդամական ժողովներ.

*Մասնաճիւղերու անդամական ժողովները կը գումարուին ամիսը մէկ անգամ:*

Հատ. 5— Բացառիկ ժողովներ.

*Բացառիկ անդամական ժողովներ կը հրաւիրուին, Նախագահին կողմէ, կամ Վարչութեան որոշումով, եւ կամ անդամներու մէկ չորրորդի գրաւոր խնդրանքով:*

Հատ. 6— Օրինական թիւ, Մեծամասնութիւն.

*Հերթական անդամական ժողովներու ատեն, Մասնաճիւղի անդամներու մէկ երրորդը կը հա-*

մարուի օրինական թիւ կամ մեծամասնութիւն, եւ սակայն, բացառիկ ժողովներու պարագային, Մասնաճիւղի անդամներու կէսէն աւելի մեծամասնութիւնը կը պահանջուի, օրինական համարուելու համար:

Հատ. 7— Նախագահ

Բոլոր ժողովներուն, տեղւոյն հովիւը կամ հոգաբարձութեան Ատենապետը կը նախագահէ, նախագահի հանգամանքով:

Հատ. 8— Պաշտօնէութեանց Պարտականութիւնները

Ա— Ատենապետը կը վարէ Միութեան բոլոր ժողովները, եւ տարեկան անդամական ժողովը, կը ներկայացնէ լրացած տարուան Միութեան գործունէութեան տեղեկագիրը:

Բ— Փոխ-Ատենապետը, կը կատարէ Ատենապետի բոլոր պարտականութիւնները, վերջինոյն բացակայութեան պարագային:

Գ—Ատենագրող-Ատենադպիրը կը ստանայ եւ կը ներկայացնէ անդամակցութեան խնդրագրերը: Կը պահէ Մասնաճիւղի անդամներու ճշգրիտ ցանկը, իւրաքանչիւրի տարիքով եւ հասցէով:

1— Հոգածութեամբ եւ ճշդութեամբ կը պահէ Մասնաճիւղի ատենագրութիւնները:

2— Կը կատարէ ժողովի բացումը Ատենապետի եւ Փոխ-Ատենապետի բացակայութեան պարագային:



3— Կը պահէ Միութեան բոլոր թղթերը, բացի այնպիսիներէ որոնք յատկապէս կը յանձնըւին ուրիշներու:

4— Իր ստորագրութեամբ կը վաւերացնէ ատենագրութիւնները եւ պաշտօնաթղթերը:

5— Ամէն ժողովի, մօտը կ'ունենայ Կանոնագրութեան օրինակ մը, եւ Յանձնախումբերու անդամներու ցանկերը:

Դ— Թղթակցող-Ատենադպիրը կը կատարէ Մասնաճիւղի բոլոր թղթակցութիւնները: Ատենագրող-Ատենադպիրի բացակայութեան կը կատարէ նաեւ այս վերջինոյն պարտականութիւնները:

Ե— Գանձապահը կը կատարէ բոլոր դրամական գանձումները, եւ Մասնաճիւղի բոլոր գումարներու հոգատարն է, որ Վարչութեան նշանակած դրամատան մը մէջ կը պահէ գանձը, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան անունով:

Զ— Ատենագրող եւ Թղթակցող Ատենադպիրները եւ Գանձապահը, իրենց գործունէութեան անջատ տեղեկագիր կը ներկայացնեն իրենց պաշտօնի վերջաւորութեան, կամ տարեկան անդամական ժողովին:

է— Բոլոր պաշտօնեայք, իրենց պաշտօնի վերջաւորութեան, Ատենապետին կը յանձնեն դրամ, հաշիւներ, թղթեր, գոյքեր եւ ամէն ինչ որ կը պատկանի Միութեան:

Հատ. 9— Օրակարգ Մասնաճիւղի Ժողովներու

Մասնաճիւղի բոլոր ժողովները կը բացուին Տէրունական աղօթքով: Անդամական ժողովը կը սահմանէ իր օրակարգը:

## ՅՕԴՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հատ. 1— Տարեկան Համագումար եւ Խորհրդատու Մարմին.

Իւրաքանչիւր Մասնաճիւղի Վարչութեան առնուազն երկու անդամները, մասնակցութիւն կը բերեն Միութեան Տարեկան Համագումարին: Նման ներկայացուցիչներէն կը պահանջուի մասնաճիւղէն նամակ մը, Նախագահի կամ Ատենադպրի կողմէն ստորագրուած, ապացուցանելու թէ անդամ են Վարչութեան, ապա եւ ուրեմն, իրաւասու, մասնակցելու տարեկան Համագումարին:

Հատ. 2— Տարեկան Համագումարին կը նախագահէ Ամերիկայի Հայոց Առաջնորդը, կամ Ս. Առաջնորդի կողմէ նշանակուած հոգեւորական մը, կամ Ազգ. Կեդր. Վարչութեան իր նշանակած անդամներէն մին:



Հատ. 3— Տարեկան Համագումարը կ'ընտրէ խորհրդատու մարմին մը, վեց անդամներէ բաղկացեալ: Առաջին տարեկան Համագումարին կ'ընտրուին Խորհրդատու Մարմնի երկու անդամներ, մէկ տարուան համար, երկու անդամներ, երկու տարուան համար եւ երկու անդամներ երեք տարուան համար, որմէ ետք, իւրաքանչիւր շրջանը լրանալուն նորերը կ'ընտրուին երեք տարուան շրջանի համար:

Հատ. 4— Խորհրդատու Մարմինը կ'ընտրէ իր պաշտօնեաները, եւ կը սահմանէ իր կանոններն ու գործունէութիւնը: Կ'որոշէ իր պաշտօնեաներու եւ Յանձնախումբերու պարտականութիւններն ու հեղինակութիւնը: Կը պահէ իր գործունէութեան եւ տարեկան համագումարի ատենագրութիւնները, որոնց պատճէնները կը ղրկէ Առաջնորդարան, տարեկան համագումարէն ետք, ամսուան մը ընթացքին:

Հատ. 5— Խորհրդատու Մարմինը, Առաջնորդարանի նախապէս գիտութեամբ, կը պատրաստէ տարեկան համագումարի օրակարգը, Մասնաճիւղերուն կ'ուղարկէ հրաւիրագրեր, եւ Առաջնորդարանի գիտութեամբ, կը նշանակէ տարեկան համագումարներու վայրերն ու ժամանակները:

Հատ. 6— Խորհրդատու Մարմինը կ'որոշէ իր ժողովներու վայրը եւ կարգաւորութիւնը:

Հատ. 7— Խորհրդատու Մարմնի Պարտաւորութիւններն են.—

Ա— Գումարել տարեկան Համագումարները:

Բ— Մատնաճիւղերուն հրահանգներ եւ յանձնարարութիւններ տալ, լաւագոյն կերպով կիրարկելու Միութեան նպատակներն ու ուղղութիւնը:

Գ— Մատնաճիւղերու մէջ յառաջացնել գործակցութիւն եւ միօրինակ գործունէութիւն:

Դ—Զարկ տալ մատնաճիւղերու գործունէութեանց եւ գաղափարներու փոխանակութեանց:

Ե— Գործադրութեան դնել տարեկան Համագումարի առած որոշումները եւ ենթարկուիլ Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի հրահանգներուն:

Հատ. 8— Խորհրդատու Մարմնի Ատենապետն ու Ատենադպիրը, նոյն պաշտօնները կը վարեն տարեկան Համագումարին:

Հատ. 9— Տարեկան Համագումարի որոշումները յանձնարարութեան հանգամանք ունին եւ պարտաւորիչ չեն մատնաճիւղերուն, մինչեւ որ վաւերացուին Առաջնորդարանի կողմէ:

Հատ. 10— Տարեկան Համագումարը կ'որոշէ Խորհրդատու Մարմնի տարեկան նախահաշիւը (բիւտճէն), եւ կը հայթայթէ զայն:



## ՅՕԴՈՒԱԾ ՎԵՑԵՐՈՐԴ

### Բարեփոխութիւն

Հատ. 1— Սոյն կանոնադրութիւնը բարեփոխելի է տարեկան Համագումարի յանձնարարութեամբ, պայմանաւ որ առաջարկուած բարեփոխութիւնները նախապէս մատնաճիւղերուն ներկայացուած եւ անոնց մեծամասնութեան կողմէ իւրացուած ըլլան, եւ պայմանաւ որ, հաստատուին Ամերիկահայոց Առաջնորդարանի կողմէ:

Հատ. 2— Սոյն կանոնադրութիւնը կրնայ բարեփոխուիլ Ամերիկահայոց Առաջնորդարանի կողմէ:

### Կազմալուծում

Որեւէ Մատնաճիւղի կազմալուծման պարագային, դրամ, գոյք եւ Մատնաճիւղի պատկանեալ ամէն ինչ, կը պատկանի եւ կը յանձնուի տեղական եկեղեցւոյ հոգաբարձութեան, եւ եթէ նման մարմին գոյութիւն չունի, Ամերիկայի Հայոց Առաջնորդարանին:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան սոյն կանոնագիրը, վաւերացուած Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ, կը յանձնենք առ ի գործադրութիւն:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Յունիս 20, 1944
Նիւ Եորք

## CONSTITUTION OF THE

## ARMENIAN CHURCH JUNIOR LEAGUE

●

### ARTICLE I

**Name**

The name of this association shall be **The Armenian Church Junior League.**

### ARTICLE II

Sec. 1. The objects of this association are:

A. To learn, practice and propagate the moral and dogmatic teaching of Christ according to the doctrine of the Armenian Church.

B. To encourage religious life and inspire a sense of true appreciation for the spiritual and cultural attributes of the Armenian Church.

C. To promote the principles of Christianity and mutual helpfulness.

D. To serve the Armenian Church and co-operate in the work of the local church trustees. To support the annual budget of the church by special contribution

Sec. 2. The Policies of this association are:

A. To observe the canons, creed, form of worship and discipline of the Armenian Church as conducted under the jurisdiction of the Supreme Spiritual Council and the catholicos of all the Armenians at Holy Etchmiadzin.

B. To work in harmony with the constitution and by-laws of the Armenian Church in America and the local church trustees.

C. To function under the jurisdiction of the local Pastor and Church Trustees with the approval of the Prelacy of the Armenian Church in America.

D. To promote Christian principles, love and co-operation among the members.
To study the rites, sacraments and the history of the Armenian Church.



## ARTICLE III

Sec. 1. All males and females who have attained the age of 16 years, who have been baptized and accept the doctrines, canons and rites of the Armenian Church are qualified to membership in this Association.

Sec. 2. Candidates for membership shall apply in writing pay their dues in advance and sign the following pledge:

> "I hereby enroll as a member of the Armenian Church Junior League, and solomnly pledge to uphold the constitution of the Armenian Church Junior League and to the best of my ability faithfully carry out the objects, policies and decisions of said League."

Sec. 3. The dues of this association shall be $2.00 annually. The time or method of payment may be determined by the Chapter membership meeting.

Sec. 4. The fiscal year shall be the calendar year.

## ARTICLE IV

### Chapters

Sec. 1. Organization of Chapters.

Ten or more persons, qualified to become members, may organize a chapter of the Armenian Church Junior League, with the approval of the local Pastor and Church Trustees.

Sec. 2. Executive Committee.

A. Each Chapter during December shall elect by majority vote and secret ballot a Chairman, Vice-Chairman, Recording Secretary, Corresponding Secretary, Treasurer and four Advisors, all of whom together shall constitute the Executive Committee. Their term of office shall be one year commencing from the month of January. Vacancies in office, during the term, may be filled by the majority vote of the Executive Committee.

B. The Executive Committee shall meet monthly and shall have power to treansact the general business of the Chapter, subject to the approval of the membership meeting.

C. It is part of duties of the Executive Committee to increase the membership of the League; receive applications for membership and present them to the membership meeting, which accepts or rejects them.

D. To plan for the ensuing year a complete program for all social, religious, educational and cultural activities of the Chapter and to conduct the execution of such program.

Sec. 3. Elections.

A. Election of members of the Executive Committee, officers and advisors shall be by secret ballot personally cast.

B. Only members who have paid their dues may be qualified to vote at elections or become candidates for elective office.

C. Candidates for elective office must be members of the League for not less than one year.

D. All elections shall be by majority vote.

Sec. 4. Regular Monthly Meetings.
Regular Membership meetings of chapters shall be held once in each month.

Sec. 5. Special meetings.
Special membership meetings may be

called by the Chairman, by vote of the Executive Committee, or upon the written request of a Quorum.

**Sec. 6.** Quorums.

One third of the members of the Chapter shall constitute a quorum of a regular monthly meeting. At special meetings, however, a majority of the membership of the Chapter shall be required to constitute a quorum.

**Sec. 7.** President.

All meetings shall be presided over by the local Pastor or the Chairman of the local Church Trustees in the capacity of President.

**Sec. 8.** Duties of the Officers.

A. The Chairman shall preside at all the meetings of the Chapter and shall present at the Annual Meeting a report of the work of the Chapter during the preceding year.

B. The Vice-Chairman shall perform the duties of the Chairman in his absence.



C. The Recording Secretary shall:

a. Receive and present all applications for membership.

b. Keep an accurate account of the membership of the chapter with the age and address.

c. Keep a careful and authentic record of all the minutes of the Junior League Chapter meetings.

d. Call the meeting to order in the absence of the Chairman and the Vice-Chairman.

e. Preserve all documents of the chapter except those specifically assigned to others.

f. Authenticate, by his signature, all records, documents, etc.

g. Bring to each meeting a copy of the Constitution, By-Law, and a list of the members of all standing and regular committees.

D. The Corresponding Secretary shall conduct the correspondence of the Chapter. In the absence of the Recording Secretary, the Corresponding Secretary shall perform his or her duties.

E. The Treasurer shall collect all money and shall be the custodian of the fund of the Chapter which shall be deposited in a bank designated by the Executive Committee and kept in the name of Armenian Church Junior League Chapter.

F. The Recording Secretary, Corresponding Secretary and Treasurers shall each make a written report of their work at the end of their term of office or at the end of the fiscal year.

G. All officers upon retiring from office shall deliver to the Chairman all money, accounts, record books, papers, or all other property belonging to the association.

**Sec. 9.** Order of Business of Chapter meetings. All Chapter meetings shall commence with the Lord's prayer. The membership meeting may prescribe the order of business of its meetings.

## ARTICLE V

### Annual Conference and Advisory Council

**Sec. 1.** At least two members of the Executive Committee of each Junior League Chapter shall attend an Annual Conference of



delegates from all Chapters of the Armenian Church Junior League. A letter of the Chapter signed by the Chairman or Secretary shall be required as evidence that such delegate is a member of the Executive Committee of the Chapter and therefore qualified to attend such Annual Conference.

**Sec. 2.** All Sessions of the Annual Conference shall be presided over by the Primate of the Armenian Church in America, or a member of the Prelacy designated by that body or a clergyman of the Armenian Church designated by the Prelacy.

**Sec. 3.** The Annual Conference shall elect an Advisory Council of six members. At the first Annual Conference two members of the Advisory Council shall be elected for one year, two members for two years and two members for three years. Thereafter upon the expiration of the term of such members, their successors shall be elected to hold office for three years.

**Sec. 4.** The Advisory Council shall elect its own officers and prescribe its own rules of procedure. It shall define the duties and authority of its officers and committees.

It shall keep a permanent record of its proceedings of the Annual Conference, a copy of which shall be filed with the Prelacy of the Armenian Church within one month after each Annual Conference.

Sec. 5. The Advisory Council with the prior knowledge of the Prelacy, shall prepare the agenda of the Annual Conference and issue invitations to the League Chapters. With the prior knowledge of the Prelacy, it shall designate the time and place of all Annual Conferences.

Sec. 6. The Advisory Council shall determine the place, regularity and frequency of its council meetings.

Sec. 7. It shall be the duty of the Advisory Council:

A. To Convene Annual Conferences.

B. To advise the local League Chapters and make recommendations for the better fulfillment of the objects and policies of the Armenian Church Juniors League.

C. To bring about cooperation and uniform activities among the Junior League.

D. To create activities among the Chapters and interchange ideas.



E. To carry out the decisions of the Annual Conference and obey the orders of the Prelacy of the Armenian Church under the jurisdiction of which body said council shall function.

F. To submit an annual report of the activities of the Junior League and the Advisory Council to the Prelacy of the Armenian Church and with the approval of the Prelacy said report may be presented or read to the next convention by their representatives.

Sec. 8. The Chairman and Secretary of the Advisory Council shall act as chairman and secretary respectively of the Annual Conference.

Sec. 9. The decisions of the Annual Conference shall be in the manner of recommendations and shall not be binding upon the League Chapters until such decisions are approved by the Prelacy.

Sec. 10. The Annual Conference shall determine the budget of the Advisory council and provide for the same.

## ARTICLE VI

### Amendment

**Sec. 1.** This Constitution may be amended upon the recommendation of the Annual Conference, provided the proposed amendments have been submitted to and approved by a majority of the Chapters, and provided further such amendment is approved by the Prelacy of the Armenian Church.

**Sec. 2.** This Constitution may be amended by the order of the Prelacy of the Armenian Church.

## ARTICLE VII

Upon the dissolution of any Chapter the assets, records and all paraphernalia shall belong to and be turned over to the local Armenian Church Board of Trustees, and if such body does not exist, then to the Prelacy of the Armenian Church.



*The fore-going Constitution of The Armenian Church Junior League, approved by the Central Excecutive Council of the Armenian Prelacy, is given to all parishes of our Diocese, to take effect from this date on.*

*ARCHBISHOP GAREGIN*
*Primate of the Armenian*
*Church in America*

*June* 20, 1944

*New York*